ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/119

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.08.2018թ. թիվ 02/26-3/14560-18 գրությամբ «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ին և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 08.08.2018թ. թիվ 07/18.3/6077-18 գրության հիման վրա, 10.08.2018թ. «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ին և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը 08.08.2018թ. թիվ 07/18.3/6077-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կարիքների համար armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարվել է ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-18/14/1 ծածկագրով գնանշման հարցում:

Ըստ ներկայացված գնային առաջարկների՝ նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «Փրայմ Թայմ» ՍՊԸ և «Մուլտի-մեդիա-Կենտրոն» ՓԲԸ կոնսորցիումը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Փրայմ Թայմ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ և պահանջել է ներկայացնել հրավերով սահմանված որակավորման փաստաթղթեր: Վերջինս սահմանված ժամկետում ներկայացրել է թերի որակավորման փաստաթղթերը: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետը, նիստը կասեցրել է և մեկ աշխատանքային օրվա ընթացքում թերությունները շտկելու պահանջ է ներկայացրել մասնակցին, սակայն վերջինս կրկին անգամ ներկայացրել է թերի որակավորման փաստաթղթեր:»:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Փրայմ Թայմ» ՍՊԸ և «Մուլտի-մեդիա-Կենտրոն» ՓԲԸ կոնսորցիումի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ կոնսորցիումը 17.08.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը իր կարիքների համար՝ «Մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների Հայաստանի տնտեսության գերակա ոլորտների և առանցքային խնդիրների վերաբերյալ տեղեկատվական արշավի կազմակերպում և դրա շրջանակում տնտեսական թեմաներով տեղեկատվական-վերլուծական հեռուստահաղորդաշարի պատրաստում և թողարկում» ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-18/14/1 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակցության հայտեր են ներկայացրել նաև «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ն և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ն կոնսորցիումով (այսուհետ նաև՝ Ընկերություն) և զբաղեցրել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.07.2018թ. ժամը 16:00 կայացած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ի և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ի (կոնսորցիում) կողմից ներկայացվել է թերի որակավորման փաստաթղթեր, մասնավորապես՝ Ընկերության կողմից չի ներկայացվել նախկինում կատարած և ավարտված պայմանագրերը և դրանց անբաժանելի մաս կազմող հաշիվ-ապրանքագրերն ու հանձման-ընդունման ակտերի պատճենները: Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը գնահատող հանձնաժողովը առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի 31.07.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ի և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ի կոնսորցիումով հանդես եկող ընկերության կողմից ներկայացված հրավերով պահանջվող որակավորման

փաստաթղթերի համապատասխանությունը՝ եզրահանգեց, որ այն չի բավարարում մրցույթով ներկայացված տեխնիկական բնութագրի պայմաններին:

«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը չլիազորված աշխատակցի կողմից ստորագրելու վերաբերյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Այսպիսով, «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ի անունից ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԾՁԲ-18/14/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացված մասնակցության հայտը ստորագրվել է Ընկերության աշխատակցի կողմից՝ առանց համապատասխան լիազորագիր ստանալու և իր անունից էլեկտրոնային եղանակով ստորագրելու նշված Ընթացակարգի մասնակցության հայտը:

Տվյալ իրավիճակում մենք գործ ունենք ոչ թե «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ի կողմից ոչ պատշաճ ներկայացված հայտի, որը ստորագրված է Ընկերության աշխատակից՝ Նունե Հակոբյանի կողմից առանց «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ի տնօրենի համապատասխան լիազորագրի:

ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձ Է.Սարգսյանի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձի 19.04.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/50 որոշմամբ արձանագրվել է, որ հայտը ստորագրելու և

ներկայացնելու իրավունք վերապահող ոչ պատշաճ լիազորագիրը հիմք է հայտը մերժելու համար՝ արձանագրելով, որ բողոքարկվող ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Ելնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձի 19.04.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/50 որոշման տրամաբանությունից՝ ստացվում է, որ ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-18/14/1 ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է՝ ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 4-րդ եթանկետի պահանջներով, մերժեր ներկայացված հայտը:

Իսկ նման պայմաններում ընդհանրապես չէր առաջանա «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված մասնակիցն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վտանգ՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման հիմքով:

«ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ի և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ի կողմից կոնսորցիումով ներկայացված գնային առաջարկ Հավելված 4-ում ԱԱՀ դաշտը չլրացնելու վերաբերյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե

պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 5.2-րդ կետի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

ՀՀ հարկային օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ շրջանառության հարկի համակարգի շրջանակներում կազմակերպությունները հարկվում են ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող շրջանառության հարկով, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ շահութահարկով և ԱԱՀ-ին փոխարինող շրջանառության հարկով, բացառությամբ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների:

ՀՀ հարկային օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը իրավունք ունեն իրենց համատեղ գործունեությունն իրականացնելու առանց նոր իրավաբանական անձ կազմավորելու՝ Հայաստանի

Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներում:

ՀՀ հարկային օրենսգրքի 253-րդ հոդվածի համաձայն՝ շրջանառության հարկը Օրենսգրքի 256-րդ հոդվածով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների իրականացման համար Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող՝ ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող պետական հարկ է: Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների համար շրջանառության հարկը փոխարինում է ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին: Շրջանառության հարկի մեջ շահութահարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 40 տոկոս, իսկ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունը՝ 60 տոկոս:

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 7-դ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել Օրենսգրքի 31-րդ հոդվածով սահմանված՝ համատեղ գործունեության պայմանագրի, ինչպես նաև ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

Այսպիսով, ինչպես արդեն նշվել է «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ն և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ն վերոնշված ընթացակարգին մասնակցել են համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, ինչի պայմաններում եթե անգամ նշված մասնակիցները մինչև համատեղ գործունեության պայմանագիր կնքելը հանդիսացել են շրջանառության հարկ վճարողներ, ապա ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 7-րդ մասի ուժով՝ համատեղ գործունեության պայմանագիր կնքելու արդյունքում վերջիններս այլևս չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարողներ: Իսկ, քանի որ ՀՀ հարկային օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 253-րդ հոդվածի համաձայն՝ շրջանառության հարկին փոխարինում է ԱԱՀ-ն, ուստի համատեղ գործունեության պայմանագիր կնքելու ուժով՝ ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 7-դ մասի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագրի կողմերը՝ «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ն և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ն այլևս չեն կարող համարվել

շրջանառության հարկ վճարող և որպես հետևանք՝ դարձել են ԱԱՀ վճարող ընկերություններ:

Այսպիսով, համատեղ գործունեության պայմանագիր կնքելու ուժով նշված ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկի հիման վրա կնքվող գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, սակայն ինչպես արդեն նշվել է, գնային առաջարկում առանձնացված տողով չի նախատեսվել այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը նույնպես անդրադարձ է կատարել համատեղ գործունեության պայմանագիր կնքելու ուժով նշված ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկին, որում մասնավորապես նշվում է՝ հայտնում ենք, որ համատեղ գործունեության պայմանագրի կողմերը համարվում են ԱԱՀ վճարողներ, հետևաբար վերջիններիս կողմից ներկայացված գնային առաջարկն իր մեջ պետք է ներառի ԱԱՀ, եթե Օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ գործարքն ազատված չէ ԱԱՀ-ից կամ 65-րդ հոդվածի համաձայն՝ չի համարվում ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարք:

Վերոհիշյալից ուղղակի հետևում է, որ «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ի և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած համատեղ գնային առաջարկը հակասում է Ընթացակարգի հրավերի 5.2-րդ կետով նախատեսված պահանջներին, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին, և Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և 41-րդ կետի համաձայն՝ որպես հետևանք վերջինիս հայտը պետք է մերժվեր:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ի և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/119 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 10.08.2018թ. թիվ 02/26-3/14560-18 գրությունը, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության 08.08.2018թ. թիվ 07/18.3/6077-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-18/14/1 ծածկագրով ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-18/14/1 ծածկագրով ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 20.07.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3, 26.07.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 և 31.07.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությունները, «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ի և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Կոնսորցիում) 17.08.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, Կոնսորցիումի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կարիքների համար՝ «մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (Հայաստանի տնտեսության գերակա ոլորտների և առանցքային խնդիրների վերաբերյալ տեղեկատվական արշավի կազմակերպում և դրա շրջանակումտնտեսական թեմաներով տեղեկատվական-վերլուծական հեռուստահաղորդաշար պատրաստում և թողարկում) ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-18/14/1 ծածկագրով ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ են ներկայացրել «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ն և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ն՝ կոնսոցիումով:

Հանձնաժողովը 20.07.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության՝

- 1.1 կետով որոշել է ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-18/14/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ին:

- 1.2 կետով որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել ներկայացնել համապատասխան որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 26.07.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ կոնսորցիումի կողմից ներկայացվել են թերի որակավորման փաստաթղթեր, մասնավորապես՝ ընկերության կողմից չի ներկայացվել նախկինում կատարած և ավարտված պայմանագրերը և դրանց անբաժանելի մաս կազմող հաշիվ ապրանքագրերն ու հանձնման-ընդունման ակտերի պատճենները:

Նույն արձանագրության նույն կետով Հանձնաժողովը որոշել է առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը 31.07.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն բավարարում մրցույթով ներկայացված տեխնիկական բոնութագրի պայմաններին, մասնավորապես.

- «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ կոնսորցիումը չունի տեղեկատվական արշավ կազմակերպելու փորձ, երբեք չի իրականացրել նախապես պլանավորված տեղեկատվության տարածման ռազմավարական գործընթաց՝ զանգվածային և անհատական իրազեկման տարբեր միջոցների և գործիքների երկարատև կիրառմամբ: Ընկերությունը չունի մամուլի ասուլիսներ, ճեպազրույցներ, կլոր սեղաններ կազմակերպելու փորձ: Ընկերության ներկայացրած թվով 12 պայմանագրերից 7-ը «Գրեյթ Վիկտորիա» ՓԲԸ-ի հետ ժամանցային միջոցառման կազմակերպման մասին են, ինչը չի ապահովում նախարարության՝ որպես պետական մարմնի աշխատանքի բովանդակային բաղադրիչների իրագործումը, իսկ մնացած 5 պայմանագրերից 2-ը ոչ ավարտուն են:

- «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ն ներկայացրել է նաև «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ի հետ համագործակցության պայմանագիր և նույն ՓԲԸ-ի տնօրենի հավաստում, առ այն որ պարտավորվում է իր ողջ մասնագիտական փորձառությամբ՝ տեխնիկական միջոցներով, նկարահանման հրապարակով և անձնակազմով, անհրաժեշտության դեպքում, «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ի փոխարեն իրականացնել

տեղեկատվական-վերլուծական հաղորդաշարի պատրաստում և հեռարձակում՝ համապետական սփռմամբ: Սակայն վերջինիս հավաստումը, ինչպես նաև լրացուցիչ փաստաթղթերը, ևս չեն պարունակում Հրավերի տեխնիկական բնութագրին ամբողջությամբ համապատասխանությունը:

Նույն արձանագրության 1.2 կետով Հանձնաժողովը որոշել է՝ «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը մերժել:

«ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ կոնսորցիումը Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է, որ «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ի անունից ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԾՁԲ-18/14/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացված մասնակցության հայտը ստորագրվել է Ընկերության աշխատակից Նունե Հակոբյանի կողմից՝ առանց համապատասխան լիազորագրի առկայության: Տվյալ իրավիճակում գնահատող հանձնաժողովը պետք է մերժեր ներկայացված հայտը, քանի որ հայտը ստորագրելու և ներկայացնելու իրավունք վերապահող ոչ պատշաճ լիազորագիրը հիմք է հայտը մերժելու համար: Ընկերությունն իր կողմից ներկայացված գրավոր դիրքորոշման մեջ հայտնել է նաև, որ Ընթացակարգի հրավերի 5.2-րդ կետի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ն և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ն համատեղ գործունեության պայմանագիր կնքելու արդյունքում չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարողներ, և քանի որ շրջանառության հարկին փոխարինում է ԱԱՀ-ն, ուստի՝ ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագրի կողմերը այլևս չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարող և որպես հետևանք դարձել են ԱԱՀ վճարող ընկերություններ: Համատեղ գործունեության պայմանագիր կնքելու ուժով նշված ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկի հիման վրա կնքվող գործարքի գծով ՀՀ պետական բյուջե պետք է վճարվի ԱԱՀ, սակայն գնային առաջարկում առանձնացված տողով չի նախատեսվել այդ

հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

- 30-րդ հոդվածի՝ 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1)հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

• 30-րդ հոդվածի՝ 2-րդ մասի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

• 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

• 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

• 34-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը

փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղն զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:
- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾԶԲ-18/14/1 ծածկագրով ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի՝

- 4-րդ հավելվածով նախատեսված գնային առաջարկի 4-րդ սյունակում առաջարկվող գնի ԱԱՀ-ի բաղադրիչը մասնակցի կողմից լրացվում է տառերով և թվերով:
- 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում

առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

• 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 321-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին:

• 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

• 8-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ շրջանառության հարկի համակարգի շրջանակներում կազմակերպությունները հարկվում են ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող շրջանառության հարկով, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ շահութահարկով և ԱԱՀ-ին փոխարինող շրջանառության հարկով, բացառությամբ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների.

• 253-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շրջանառության հարկը Օրենսգրքի 256-րդ հոդվածով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների իրականացման համար Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող՝ ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող պետական հարկ է:

• 253-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների համար շրջանառության հարկը փոխարինում է ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին: Շրջանառության հարկի մեջ շահութահարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 40 տոկոս, իսկ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունը՝ 60 տոկոս:

• 254-րդ հեդվածի 3-րդ մասի 7-րդ կետի հաաջայն՝ շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել Օրենսգրքի 31-րդ հոդվածով սահմանված՝ համատեղ գործունեության պայմանագրի, ինչպես նաև ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

• Հանձնաժողովը արձանագրել է, որ «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ կոնսորցիումի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը չեն բավարարում մրցույթով ներկայացված տեխնիկական բնութագրի պայմաններին.

• Հանձնաժողովը առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները, սակայն վերջինս կրկին անգամ ներկայացրել է թերի որակավորման փաստաթղթեր.

• ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագրի կողմերը չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

• համատեղ գործունեության պայմանագիր կնքելու ուժով ընկերությունները ՀՀ պետական բյուջե պետք է վճարեն ԱԱՀ, սակայն Ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկի 4-րդ սյունակում ԱԱՀ-ի բաղադրիչը լրացված չէ թվերով և տառերով:

• «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ն հայտ է ներկայացրել, որում առկա փաստաթղթերը ստորագրվել են ոչ թե տնօրենի կողմից, այլ վերջինիս կողմից ոչ լիազորված անձի կողմից:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը Հանձնաժողովի կողմից պետք է մերժվեր, քանի որ «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ի անունից հայտով ներկայացված փաստաթղթերը ստորագրված են եղել ընկերության աշխատակցի կողմից, ով չի ունեցել դրանք ստորագրելու լիազորություն:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Կոնսորցիումի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում Հրավերի 5.2 կետով և 4-րդ հավելվածով նախատեսված պահանջներին, հետևաբար, Հանձնաժողովի կողմից Կոնսորցիումի հայտը Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի հիմքով պետք է մերժվեր, ինչի արդյունքում ի հայտ չէին գա այն հանգամանքները, որոնք հիմք են ծառայել Ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.08.2018թ. թիվ 02/26-3/14560-18 գրությամբ «ՓՐԱՅՄ ԹԱՅՄ» ՍՊԸ-ին և «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ